ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հոկտեմբերի 2024թ. N 729-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65-րդ հոդվածի՝ ***որոշում եմ.***

Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Մշակույթի տան փոքր դահլիճում 2024 թվականի հոկտեմբերի 04-ին, ժամը 17:00-ին հրավիրել համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգային հարցերով.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2024 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:

2.Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն/անհամաձայնություն տրամադրելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գները հաստատելու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Qualified Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 01
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հոկտեմբերի 2024թ. N 730-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՍԻՐԱՆՈՒՇ ԱՆԴՐԻԱՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 57-րդ և 66-րդ հոդվածների, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14[3]-րդ և 30-րդ հոդվածների, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 51-րդ կետի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-րդ, 34-րդ և 34.2-րդ կետերի, 35-րդ կետի «դ» և «ե» ենթակետերի ու հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 12-ի N 19-Ա որոշումը, N 01102024-07-0081 սեփականության վկայականը, Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 46 շենք 12 բնակարան հասցեի բնակիչ Սիրանուշ Բաբկենի Անդրիասյանի 2024 թվականի հուլիսի 23-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 43/50 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 26.6 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը 52375,4 (հիսուներկու հազար երեք հարյուր յոթանասունհինգ ամբողջ չորս տասնորդական) դրամով և դրա զբաղեցրած 0.00266 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման (ծածկագիր՝ 07-003-0020-1151) հողամասը 118151,88 (մեկ հարյուր տասնութ հազար մեկ հարյուր հիսունմեկ ամբողջ ութսունութ հարյուրերորդական) դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել կառույցն իրականացրած Սիրանուշ Բաբկենի Անդրիասյանին (ծնված՝ 1964 թվականի նոյեմբերի 05-ին):

2.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքը դուրս գրել Բյուրեղավան համայնքի հաշվեկշռից:

3.Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի առուվաճառքի պայմանագրի վավերացման և գրանցման հետ կապված վճարները կատարվում է Սիրանուշ Բաբկենի Անդրիասյանի կողմից:

4.Սիրանուշ Բաբկենի Անդրիասյանը պարտավոր է Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202064 հաշվեհամարին վճարել 5000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման համար ծառայության վճար:

5.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ Անդրանիկ Արտուշի Եղիազարյանին (նույնականացման քարտ՝ 015607237, տրված՝ 2024 թվականի մարտի 21-ին 059-ի կողմից, ծնված՝ 1963 թվականի օգոստոսի 28-ին)՝ կատարել Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 43/50 հասցեում գտնվող 26.6 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա զբաղեցրած 0.00266 հեկտար մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի ձևով Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 46 շենք 12 բնակարան հասցեի բնակիչ Սիրանուշ Բաբկենի Անդրիասյանին օտարելու հետ կապված գործարքներ և կնքել առուվաճառքի պայմանագիր:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recognizable Signature

X

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 02
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հոկտեմբերի 2024թ. N 731-Ա

«ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ ԳԱՌՆԻԿԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ավետիք Ասոյանի հայտը և վճարման անդորրագրերը՝ ***որոշում եմ.***

1.«Ավետիք Ասոյան Գառնիկի» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 43039059) տալ ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 26/87 հասցեում գտնվող 88.45 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2024 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ի համար (N 33-24 ՈԽԾ թույլտվությունը կցվում է):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 04
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հոկտեմբերի 2024թ. N 732-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՏԱՅՔԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1994 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԹԻՎ 10 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 5.1-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Գոհար Յուրիի Իսկանդարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Պատգամավորների Կոտայքի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 1994 թվականի հոկտեմբերի 31-ի «Բնակարանը սեփականաշնորհելու մասին» թիվ 10 որոշման 4-րդ կետի «բ» ենթակետում «Իսկանդարյան» բառը փոխարինել «Իսկենդերյան» բառով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 04
ք. Բյուրեղավան